

3. Խաչակրաց Եկեղեցիները Գազայի մէջ .

Ա. Պատմութիւնը .

Գազան՝ լատին յաղթանակի ատեն աւերուած և լքուած ըլլալով՝ Խաչակիրները նորոգեցին զայն : 1149ին Պաղատին Բ. ամբարցուց Գազան . 1170ին Սալահէտտին աւերակի վերածեց զայն . բայց դեռեակը դիմադրեց . 1187ին սն գրաւուեցաւ : 1192ին Ռիչարտ վերագրաւեց զայն . դաշնագրութեան պայմաններուն համաձայն ամբուծիւնները քանդուեցան . 1244ին Խարիզմեանց արշաւանքներուն պատճառաւ Գազան դարձեալ աւերեցաւ , և այլևս իր հին կարևորութիւնը չկրցաւ ստանալ :

Գազան քրիստոնէական հին քաղաք մ'էր : 406ին Պորփիրիոս եպիսկոպոս հոն շինած էր երկու թեքով պաղիլիքա մը : Պորփիրիոսի գերեզմանը ցայժմ կը տեսնուի Յունաց եկեղեցիին մէջ . չէնք մը որ իր ամբողջութեամբը շինուած է Խաչակիրներուն կողմէն և թե չունի : Հին պաղիլիքայէն գտնուածները ուրիշ բաներ չեն , բայց եթէ գործածուած հին սիւներ և թերևս յղկուած քարեր :

Բ. Մայր Եկեղեցին .

Ս. Յովհաննէս Մկրտչի նուիրուած լատին մայր եկեղեցին Եւրիշ թաղի մը մէջ կը գտնուի , և սն կը կոչուի Մեծ Մզկիթ : Այժմ սն աւերակ է , վասն զի 1916ին անգլիական հրետանին անկէ օդը հանած է ռազմանիւթերու մթերք մը :

Vogüé պարզապէս միայն կը յիշատակէ : The Survey of Western Palestine նկարագրած է նոյն եկեղեցին և յատակագիծն ալ շինած : Գազայի Մայր եկեղեցին և Ս. Պորփիրը ընտիր և կատարեալ ուսումնասիրութեան նիւթ եղած են Clermont-Ganneauի կողմէն ընկերակցութեամբ ոչ նուազ գեղեցիկ յատակագիծերով Lecomte du Nouyի :

Մայր եկեղեցին բիւզանդական պաղիլիքայի մը տեղը կը գրաւէ , և կ'օգտագործէ անոր հին սիւները : Ան վերաշինուած է